պատճառաբանությունը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանը գնահատել է ներկայացված բոլոր ապացույցները, և դատական ակտ է կայացրել՝ ղեկավարվելով այդ բոլոր ապացույցների հիման վրա հաստատված փաստերի նկատմամբ կիրառելի և վերաբերելի նյութական և դատավարական իրավունքի նորմերով՝ այդպիսով հանգելով հիմնավոր և իրավաչափ եզրահանգման, որ հայցը ենթակա է մերժման, ուստի Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ներկայացված վերաքննիչ բողոքում նշված փաստարկները դատական սխալի մասին հիմնավորված չեն, իսկ վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը հիմնավոր է, և գտնում է, որ Դատարանը թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտում, ուստի բողոքը բավարարելու հիմքերը իրավացիորեն բացակայում են, հետևաբար՝ վերաքննիչ բողոքը ենթակա է մերժման, որպիսի պայմաններում կիրառման է ենթակա Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի 13.09.2024թ. վճիռը անփոփոխ թողնելու Վերաքննիչ դատարանի լիազորությունը:

Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանում դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքի գումարից, այն նախապես վճարվել է բողոք բերող անձի կողմից, իսկ վերաքննիչ բողոքի մերժման պայմաններում դատական ծախսերը բաշխելու հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ, 381-րդ և 387-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Սյուն Մետալ» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը մերժել՝ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/6491/02/24 քաղաքացիական գործով 13.09.2024թ. վճիռը թողնել անփոփոխ:

2. Դատական ծախսերը բաշխելու հարցը համարել լուծված:

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից տասնհինգ օր հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով:

Նախագահող դատավոր՝ **Դավիթ Սերոբյան**

Դատավորներ՝ **Գայանե Խաչատրյան**

Նարինե Բարսեղյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am